



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԵՎ ՔԱՐՈՋ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՄԱՀՎԱՆ ՀԻՄՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Նոյեմբերի 17-ին, կիրակի օր, Վեհափառ Հայրապետը հոգեհանգստյան սուրբ պատարագ մատուցեց Մայր Տաճարում, ի հանգիստ հոգվո երջանկահիշատակ Տ. Տ. Մկրտիչ Ա. Խրիմյան Կաթողիկոսի Ամենայն Հայոց:

Սուրբ պատարագին ներկա էին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, Հոգևոր ճեմարանի տեսչական և դասախոսական կազմը, «Էջմիածին» ամսագրի խմբագրական կազմը, Մայր Աթոռի պաշտոնեակազմը, մտավորականներ, ուսուցիչներ, մամուլի և ռադիոյի ներկայացուցիչներ:

Հոգեհանգստյան սուրբ պատարագին ներկա էին նաև Խրիմյան Հայրիկի եղբոր թոռներն ու հարազատները իրենց ընտանիքներով:

Մայր Տաճարի երգեցիկ խումբը ներդաշնակ ու հանդիսավոր երգում է Եկմայլանի սուրբ պատարագը: Մայր Տաճարի կամարների տակ մարմին է առնում Խրիմյան Հայրիկը՝ իր պարթև հասակով, մարգարեստիպ դեմքով, արծվեթիբ նայվածքով ու շնչով: Տաճարում կարծես դեռ արձագանքում է Խրիմյանի հայրենաշունչ ձայնը... Խրիմյան Հայրիկը ապրում է Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի մեջ:

«Հայր մեր»-ից առաջ, խոր լուռության մեջ, հնչում է Խրիմյան Հայրիկի արժանավոր ժառանգի և հաջորդի սրտագին ձայնը:

«Ցանուն Հօր և Որդայ և Հոգայն Սրբոյ»:

«Ցիչեցէ՛ք զառաջնորդս ձեր որ խոսեցան ձեզ զրանն Աստուծոյ.
հայեցեալ՝ յիս զհացից ևցա ճմանող՝ եղբուք հաւատացն»:

(ԵՐՐ. ԺԳ 7)

«ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՄԿՐՏԻՉ Ա ՎԱՆԵՑԻ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ, ՆՈՒԱԳՈՂ ՎԵՏԻՑ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՀԱՅՈՑ: ԾՆԵԱԼ Ի 4 ԱՊՐԻԼԻ 1820 ԱՄԻ, ՎԱԽՃԱՆԵԱԼ Ի 29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1907 ԱՄԻ»:

Այստեղ, Միածնաէջ այս Տաճարի հրաշակեալ զանգակատան կողքին, ապիտակ մարմարե տապանաքարին տակ, ամփոփված է մարմինը Հայոց Հայրիկին: Վասպուրականի Արծիվն է, իր աչքերը հավեա փակած:

Հիսուն տարիներ անցան այդ օրեն: Հիսուն տարիներ Ս. Էջմիածինը և հայ ժողովուրդը ապրեցան որքացած իրենց Հայրիկեն:

Մկրտիչ Խրիմյան ծնալ ու իր հոգիին սնունդը առալ հայ ժողովրդի անմահության ակերեն, հայ ժողովրդի տառապանքներեն, հայ ժողովրդի հավատի և հույսի անմահ կանթեղեն, որ կպղպղա դարերե ի վեր Փրկչի Իջման այս Ս. Սեդանին վերև:



ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԵՆԻ ՇԻՐՄԱՔԱՐԸ

Տակավին պատանի, իր Հայրենի հողերուն վրա ոչխար արածեց ան իրև բարի հովիվ, և ապա իրև դաստիարակ և հոգիներու մշակ, յույս բաշխեց իր շինականներուն, և երեսուն և հինգ տարեկանին Տիրոջ քաղցր յուծը իր ռսե-

րուն վրա առավ իբրև հոգևոր մշակ և հովիվ, պահպանելու և առաջնորդելու համար հավատացյալ հոտը Հայաստանյայց: Միեւելի՝ ժողովուրդ, երկար է պատմությունը իր կյանքին և իր ձեռաց բարի գործերուն, հայրենակներ գործերուն: Հայ ժողովրդի ավելի քան կես դարու պատմությունն է այդ՝ վրտի, արցունքի, որոնումներու, մարտնչումներու, հույսի, հավատքի, պայծառ տեսիլքի:

Եվ օր մըն ալ արդար, Տիրոջ ողորմությամբ՝ հայ ժողովրդի վրտի անդունդներն ու հույսի լեռները իր մեծ սրտին մեջ գրկած, և խաչը երկաթի իր ձեռքը բռնած, Դահլիճ բարձրացավ Ս. Լուսավորչին, Ս. Էջմիածնի կամարներուն տակ, իբրև Հայրապետ Ամենայն Հայոց: Երկար տարիներ եղավ Հովվապետ՝ բաշխվելով ամբողջ, և բաշխելով բոլոր հայերուն և՛ յույս, և՛ հույս, և՛ հավատք: Եվ օր մը խաղաղ Հայրիկը Հայոց փակեց աչքերն իր պայծառ, փոխվելով երկինք: Եվ ազատագրված էյուրփն կապակներեն, կենդանի մնաց ան իր հոգիով, սրտով, հսկելու համար իր Հայրենի երկրի և ժողովրդի կյանքին ու հակառակորդներին: Եվ դարձավ խորհուրդ, դարձավ հեփիաթ, դարձավ մարգարե, և կարապետ արքուն:

Իր կյանքի ընթացքին երկու տեսիլներ, երկու մեծ իդներ առաջնորդեցին զինք՝ խաղաղությունը և շինությունը Հայրենի Հողին, ավերակներուն, և վերադարձը պանդուխտ հայերուն դեպի Հայաստան, դեպի Նոյան տապան:

Ահա կտակը Հայոց Հայրիկին.

«Ես կրողում մեր Հայրենի ժառանգություն, դաշտեր ու հողեր, կրողում քեզ գութան երկու տավարներով, կրողում կրան կովեր ու ոչխարներ:

Թե մեռնիմ, երբամ գերեզման, և այլևս չկարեմ խոսիլ ձեզ հետ կենդանի բարբառով ու գրով, անհ կրողում ձեզ գիրս իբրև մշտախոս կտակ և հիշատակ, որուն միակ նպատակն է, որ հայն իր հայրենատուր հողեն չբաժնվի:

Այսպես, Թոռնիկ, հողն պետք է կենաց և մահու օր, սուրա համար Պապիկն զքեզ հողին հետ կապեց ու պսակեց, որ պինդ գրկես զհողն, չբողոս որ բորբոքներ ձեռքեզ հափշտակեն, դու անհող մնաս»:

Ո՛վ պաշտելի Հայրիկ մեր անմահ, տե՛ս, խաղաղ է երկիրդ քու սուրբ և Հայրենի հողը բերրի իր կուրծքը կրանա քու թոռնիկներուդ աշխատանքով արդար, քու երազած ճարտար հնարքներով արդի գիտության, պտուղներ տալով մեկի տեղ երեսուն, մեկի տեղ վարսուն, մեկի տեղ հարյուր: Եվ կյեզվին ամբարները հայ շինականներու, առատ կնոսի ոսկեվազ գինին Արարատյան դաշտի և կարճառանգ ֆառափներն ու գլուպեր մեր ջեն և համայն ժողովուրդը մեր, սուրբ տեղով զեղուն, կապի շինելով, կշիներ երգով, յույսով, երազով...

Բայց ո՛վ Հայրիկ մեր, «նվազող վրտից Հայրենյաց Հայոց», ինչպես քու կյանքիդ օրերուն, այսօր ալ տակավին կան ի սփյուռս աշխարհի ցրված պանդուխտներ, մեր աշխարհեն պոկված հայ շինականներ, հազար հազարներ...

Աղոթե Դուն հայոց Աստուծուն, Հայոց Հայրապետ, և օգնե մեզ տկարներուս, որպեսզի կարենանք քու հոտը պահել պահպանել ամբողջ և անխռով, հեռու կոռուսյան ճանապարհներեն, հափշտակիչներու անգութ ձեռքերեն, պահել պահպանել մեր հոտը հավատարիմ իր հավիտենական հովվին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, իր մայրենի անուշիկ լեզվին, իր սրբություններուն և իր կյանքի մշտանոս աղբյուր հարազատ Մայր Հայրենիքին, մինչև օրն այն արևով լեզուն, երբ շեփորները վերստին հնչեն, և երբ փրկության լաստերը ազատ արձակվին, և դեպի երկիր դառնան պանդուխտ որդիները Մեր՝ աշխարհի բոլոր ծագերեն, բոլոր անխտիր:

Միեւելի՝ հավատացյալ ժողովուրդ հայոց, Հայրենիքն ենք քե ի սփյուռս աշխարհի, այսօր, այս աղոթքի և հույսի պահուն, հանգիստ կարդալով մեծ Հովվապետի յույս դարձած հոգվույն, անգամ մը ևս ովստենք մեզ հավատարիմ իր հիշատակին, իր մեծ իդներուն, աստվածակառույց այս Ս. Տաճարին՝ մեր սուրբ հավատքի կենարար ջուրով՝ ապրիկն ու շինենք ի փառս Աստուծո, ի փառս Ս. Էջմիածնի, ի փառս Ազգին և Հայրենիքին մեր:

Սրբազնասուրբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն և Խրիմյան Հայրիկի յույս դարձած շիրիմեն բոլորիդ ողորպե՛ն, բոլորիդ օրհնությու՛ն՝ սիրով, կարոտով, փառք հույզերով:

Բարեխառությամբ բոլոր սուրբերուն և երջանկանիցատակ մեծ Հայրապետին՝ Մկրտիչ Ա Կաթողիկոսին Ամենայն Հայոց, թող Տերը զձեզ պահե պահպանե խաղաղ, անվրդով, սիրով միաբան, մեկ հոտ և մեկ հովիվ, այժմ և հավիտյան:

Լո՛ւյս, լո՛ւյս, խաղաղությո՛ւն և օրհնությո՛ւն և հավիտենական փա՛նֆ երանաշնորհ Հայոց Հայրիկին. ամեն»:

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է պաշտոնական հոգեհանգիստ: Խնկի անուշ բուրմունքի հետ աղոթավոր հաղար սրտերից դեպի երկինք է բարձրանում սրբազան շարականի մրմունջը՝ «Որ յանէից...», ապա «Քահանայք և ժողովուրդ...», «Յիշեա Տէր, զհոգի հանգուցեալ պատուական Հայրապետին մերոյ Տեառն Տեառն Մկրտչի առաջնոյ Խրիմեան Հայրիկի Ամենայն Հայոց և հանգո զնա ի լոյս երեսաց աստուածութեանդ քո»:

Դուրսը աշնանային ջինջ արև է: Երկինքը ժպտում է: Մայր Տաճարի զանգակատան կողքին, Ներսես Աշտարակեցու շիրմին առջնիքներ, շիրման է Խրիմյան Հայրիկի: Թաղարներով թարմ ծաղիկներ են դրված շիրմի վրա և մոմեր, որոնք լույսե արցունքի պես վառվում են: Ժողովուրդը, միաբանությունը շրջապատել են Խրիմյանի շիրմը: Հարա-

զատները ծաղկեպսակներ են բերել, իսկ հայ ժողովուրդը՝ իր հրախտագետ սիրտը:

Կատարվում է նորից հոգեհանգստյան պաշտոն Խրիմյանի շիրմի վրա:

Խրիմյանը չի մեռել, նա ապրում է, կապրի՝ քանի ապրի հայ ժողովուրդը:

Վեհափառ Հայրապետը թափորով առաջնորդվում է Մաղկյա դահլիճ և «Հոգեոց» արտասանում ի հանգիստ Խրիմյան Հայրիկի հոգու:

Ժամը 4-ին վանական սեղանատան մեջ տրվում է հոգեծաշ (թանապուր և հարիսա), որին մասնակցում են Վեհափառ Հայրապետը, միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Խրիմյան Հայրիկի հարազատները:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

